

Հրանտ Կարապետյանի հուշամրցաշարը բացեց ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանը

2013 թվականի մարտի 29 -ին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և ՀՀ շախմատի ակադեմիայի Եղեգնաձորի մասնաճյուղի նախաձեռնությամբ մեկնարկեց եղեգնաձորցի շախմատիստ Հրանտ Կարապետյանի հիշատակին նվիրված շախմատի երկօրյա հուշամրցաշարը, որին մասնակցում էին 16 շախմատիստներ՝ առանց տարիքային սահմանափակման: Վեջիններս շվեցարական մրցակարգով կայաքարեն գավաթի համար:

Մրցաշարը բացեց ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մ. Հարությունյանը, ելույթ ունեցան Ա.Խուղավերյանը, Ն. Կարապետյանը, Յու. Կարապետյանը և Պ. Հովսեփյանը, որոնք մասնակիցներին ներկայացրին Հրանտի շախմատային կենսագրությունը, վերհիշեցին նրա խաղացած գեղեցիկ, կոմբինացիաներով ու զոհաբերություններով հարուստ պարտիաներն ու սպորտային նվաճումները: